Հ. Ս. Խ. Հ. ԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆ

631.5
Ի-62

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

26.04.2013

ԱՍԵ ՀՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿՈՒԼԱԶԿԵՆՏՐՈՆ

631.5
Ի-62

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

1931 ԵՐԵՎԱՆ

Հանրային Գրադարան
Публ. Библиотека
ՀԱԽՀ—ССРА
Армянская ССР
14814-57

Հրատարակ. № 1706
Գլավլիտ № 6549 Տիրաժ 10.000 Պատվեր № 3479
Պետքաղաքի տպարան Ցերեվան

ՀՐԱՇԱՆԳ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1931 Թ. ՅԱՆՔՍԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՅԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՌԹԻՎ

Յանքսերի խնամքի և բերքահավաքի առաջիկա կամպանիան խիստ կարեվոր տնտեսական և քաղաքական նշանակություն ունեցող խնդիր է։

Կոլլեկտիվացման աճումը, համայնացրած ցանքսերի լայնացումը և կոլխոզների կազմի մեծ մասի նոր լինելու հանգամանքը պահանջում է, վորպեսզի իր ժամանակին և ուշադրությամբ հաչվի առնվի առաջիկա աշխատանքների ծավալը և ձեռք առնվեն այնպիսի միջոցներ, վորոնցով ապահովվի կոլխոզների ցանքսերի լրիվ և կանոնավոր խնամքն ու բերքահավաքը, և առավելագույն չափով հնարավորություն ստեղծվի կոլխոզների կողմից չքավոր և միջակ անհատ տնտեսություններին կազմակերպված ոգնություն ցույց տալու և ապա կոլխոզ ներգրավելու։

Բերքահավաքի կամպանիայի հաջողությունը մեծ չափով կախված է նրանից, թե կոլտնտեսություններն ինչ չափով կկարողանան հաչվի առնել անցյալ տարվա սխալներն ու

թերությունները և ինչպես կվերացնեն դրանք:

Անցյալ տարվա գլխավոր սխալները կայանում էին նրանում, որ բերքահավաքի նախապատրաստական աշխատանքներն, ինչպես և բերքահավաքի գործնական աշխատանքերն ոկավեցին ուշ, որի պատճառով մի շարք կոլխոզներ չկարողացան դասավորել ուժերը և կազմակերպել բերքահավաքի աշխատանքը:

Չկարողացան պայքարել կորուստների դեմ և ցանքսերի խնամքի հետամնաց ձևերի դեմ:

Չկարողացան ինամքով վերաբերվել մեքենաների ու գործիքների հետ և աշխատեցնել նրանց լրիվ բեռնվածությամբ:

Չկարողացան պետք եղած չափով ոգտագործել կանանց և ընդհանրապես կոլխոզների աշխատող ձեռքերը՝ զանազան աշխատանքներում:

Բերքահավաքից հետո յերկար ժամանակ ձգձգվում եր կալսելու աշխատանքը. մեքենաների ու գործիքների նորոգումն իր ժամանակին չեր կատարվում:

Բերքահավաքի կամպանիայի ընթացքում մոռացվել եյին աշնանացանի նախապատրաստական աշխատանքները, որի հետևանքով 1931 թ. ցանքսերի տարածության պլանի կատարումը վորոշ խոչնդոտների հանդիպեց (բամբակի հողերում աշնանացան կատարելը, և այլն):

Կոլխոզների աշխատող ձեռքերի վոչ լրիվ ոգտագործման պատճառով դրսից աշխատող ձեռքերի անհրաժեշտ պահանջներ ներկայացրին և աղավաղեցին կուսակցության գիծն այդ ինդրում:

Հաշվի առնելով այս ասպարիզում անցյալում կատարված բոլոր սխալները, մանավանդ բամբակի բերքահավաքի նկատմամբ, անհրաժեշտ է հենց գարնանացանի աշխատանքների ընթացքում ձեռնարկել բերքահավաքի աշխատանքների ծրագիրը կազմելուն: Հիմք ընդունելով գործավարձը, աշխատանքի ճիշտ կազմակերպումն ու դասավորումը, կանխավճարների ճիշտ բաշխումն ըստ աշխատանքների, նոր կոլտնտեսությունների ձևավորումը, պետք է կազմեք ցանքսերի խնամքի և բերքահավաքի ծրագրերն այնպես, որ ժամանակին կազմակերպվեն ինչպես այդ կամպանիայի ընթացքում կատարվող բոլոր աշխատանքները, նույնպես և առաջիկա աշնանացանի և 1932 թ. գարնանացանի համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները:

Խնամքի և բերքահավաքի ինդիրների առթիվ անհրաժեշտ է կազմակերպել լայն մասսայական քաղաքական կամպանիա, պարզաբանել անցյալի սխալները, հրավիրել բո-

յոր կոլխոզնիկների և աշխատավոր-գյուղացիության ուշադրությունը՝ գործնականում մասնակցելու առաջադրվող խնդիրների կիրառմանը։

Նկատի ունենալով արտադրական պլանների վորոշ թերություններն, անհրաժեշտ է բերքհավաքի կամպանիայի պլաններն ուշադրությամբ քննել արտադրական խորհրդակցություններում, բրիգադներում և հասցնել յուրաքանչյուր կոլխոզնիկի։

Կուլտուր-քաղաքական աշխատանքով զբաղվող մարմինները, խրճիթ-ընթերցարանները, ակումբները, խմբակները և գյուղի բոլոր կուլտուրական ուժերը պետք է իրենց աշխատանքների առանցքը դարձնեն բերքհավաքի կամպանիան, նրա կազմակերպման խնդիրները, կոլխոզնիկների և չքավոր ու միջակ անտեսատերերի դասակարգային ինքնագիտակցության բարձրացումը և այլն։ Դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ պետք է կատարել թերթի ընթերցում, կազմակերպել կենդանի թերթի յելույթներ, ներկայացումներ, շրջիկ-ընթերցարաններ, կարմիր վրաններ։

Բերքհավաքի կամպանիայի հաջողությունը մեծ չափով կախված է նաև կոլխոզի կազմի պատրաստականությունից։ ուստի այդ կազմում պետք է առաջ քաշել ամենալավ կոլխոզնիկներին, հնարավորություն տալ նրանց զանազան դասընթացներում վերապատրաստվելու, ինչպես նաև բերքահավաքի կամպանիայի հետ կապված զանազան աշխատանքների համար նոր կադրեր պատրաստելու։

Խնամքի և բերքահավաքի կամպանիան պետք է ընդգրկի հետևյալ աշխատանքները.—

1. ՇԱՐՔԱՀԵՐԿ ԲՈՒՅՍԵՐԻ ՔԱՂՀԱՆԸ.

Այն կոլխոզներում, վորտեղ մշակվում են բամբակ, ճակնդեղ, կարտոֆիլ և այլ շարքահերկ բույսեր, անհրաժեշտ է քաղհանի և բուկ լցնելու աշխատանքները կատարել այնքան անգամ և այն ձևով, վորը պահանջում է տվյալ կուլտուրայի ռացիոնալ մշակությունը և կատարել ամենակարճ ժամանակվա ընթացքում։ Յուրաքանչյուր շրջանում շրջկոլխոզմիությունները սահմանում են այդ աշխատանքների քանակը և ժամկետը շրջանի կոլխոզների համար, յելնելով կենտրոնական մարմինների կողմից սահմանված ժամկետներից։

2. ՊԱՅՔԱՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ.

Պտղատու ծառերի և խաղողի այգիների սրսկումը, բամբակի սրսկումը, ուրիշ վնասատուների դեմ պայքարը պետք է կատարել այնքան անգամ, վորքան սահմանվում է Սերմանման Կամպանիայի Արտակարգ Լիազորի կող-

մից և ագրոտեխնիկայի պահանջների համաձայն։

3. ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՈՏԱՏԵՂԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ, ԽՈՏԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ.

Խոտհարքների և արոտատեղերի բերքատվությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվում են ամենապարզ ձեռնարկումներ, վորոնք են՝

ա) առուների կարգավորումը, թփուտներից և քարերից մաքրելը, արոտատեղերի փոցխելը և այլն։

բ) Խոտհարքները քաղվում են իրեն ժամանակին (ծաղկման շրջանում).

գ) խոտի քաղից հետո, ինչպես և ուժեղ անձրևներից հետո խոտհարքներում արգելվում է անասուններին արածացնելը. դ) արոտատեղերը բաժանում են մասերի և արածեցնում են ստիճանաբար։

Խոտի բերքահավաքի ընթացքում ամբողջ հնձված խոտն ստիճանաբար պետք է փոխադրել և դիզել այնտեղ, վորտեղ գտնվելու են կոլխոզի անասունները ձմեռվա ընթացքում։

4. ԽՈՏԱՍԵՐՄԵՐԻ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ.

Անասնապահության զարգացման հիմնական պայմաններից մեկը խոտացանությունն է. սակայն վերջինիս տարածություններն ընդարձակելու համար կոլտնտեսություններն, ինչպես և ընդհանրապես մեր գյուղատնտեսությունը, սերմացվի խիստ պակասություն են զգում, վորի պատճառով խոտացանության պլանները միշտ թերակատարվում են։ Այդ մեծ բացը վերացնելու նպատակով կոլտնտեսություններն իրենց խոտացանքների տարածությունների մի մասը, նրանց 30 %-ից վոչ պակաս պետք է հատկացնեն սերմացվի համար. պետք է ապահովեն այդ նպատակով թողնվող ցանքների խնամքը, սերմացվի ապահովումը և նպատակահարմար ոգտագործումը։

5. ԿԵՐԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՈՒՄԸ.

Նկատի առնելով սիլոսացման ասպարիզում անցյալ տարի ձեռք բերած հաջողությունները, հաշվի առնելով նաև թերությունները, պետք է կատարել բոլոր անհրաժեշտ աշխատանքները՝ սիլոսացման պլանը կատարելու համար, դարնացանի արդյունքների հիման վրա վորոշ փոփոխություններ մտցնելով այդ պլանի մեջ։

Բացի սիլոսի համար հատկապես ցանված բույսերից առավելագույն չափով պետք է ոգտագործել այդ նպատակի համար նաև տեղական զանազան տեսակի մոլախոտերի, բանջարեղենների և զանազան բույսերի մնացորդները ինչպես ճակնդեղի տերևները, կաղամբի մնացորդները և այլն։

6. ԿԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

Նպատակ դնելով անասնապահության լրիվ ապահովումը կերով, մի անգամ ընդմիշտ վերացնելու անցյալ տարվա թերությունները, բոլոր կոլխոզներն անպայման պետք է կատարեն հետևյալ աշխատանքները.—

ա) Պատրաստել առնվազն այնքան քանակությամբ կեր, որ բավարարի անասնապահության կարիքները 1931/32 թ. ընթացքում լրիվ չափով:

բ) Կազմակերպել կոպիտ կերերի անձեռնմխելի ֆոնդ, որը պետք է կազմի տարեկան ամբողջ կերի պահանջի առնվազն 15 %-ը:

գ). Յուրաքանչյուր կոլխոզում առանձացնել վարչության անդամներից մեկին նրան հանձնարարելով կերի հետ կապված խնդիրների մշակումն ու կազմակերպումը, նրան պատասխանատու դարձնել խոտի բերքահավաքի, սիլոսացման, կերի ֆոնդերի, և ընդհանրապես անասնապահությունը կերով ապահովելու պլանների կատարման համար:

Մայիսի վերջերին կամ հունիսի սկզբներին, խոտի բերքահավաքի նախորյակին, բոլոր շրջաններում կազմակերպել արտադրական խորհրդակցություններ՝ կոլխոզների, սովխոզների և անհատ տնտեսատերերի մասնակցությամբ, քննության առնել կերի հարցի լուծման համար կատարվելիք ձեռնարկումները:

7. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ.

ա) Բերքը լրիվ չափով հավաքելու, հնարավոր կորուստներից խուսափելու համար անպայման պետք է բերքհավաքն սկսել առանց ուշացումների և վերջացնել ամենակարճ ժամանակվա ընթացքում: Առանձնապես մեծ ուշադրություն դարձնել այն կուլտուրաների վրա, որոնց բերքը հասնելուց հետո ուշ հավաքելու դեպքում, բերքը թափվում է. (որինակ՝ բամբակը, հացաբույսերը և այլն), կամ շուտով փչանում է (ինչպես ծխախոտը) և արժեքը կորցնում:

բ) Տեսակավոր և ընդհանրապես լավ վարակի սերմացույով ցանված ցանքսերի բերքը հավաքել և պահել առանձին՝ սերմացուի համար ոգտագործելու նպատակով:

գ) Հացահատիկների և այլ կուլտուրաների բերքը նախ քան պահեստ տեղափոխելը կալում դտել տրիյերով (սերմազտիչ մեքենա):

դ) Բերքը հավաքելուց հետո ամենակարճ ժամանակվա ընթացքում կալսել, շուտով վերջացնել դրսում, բացոթյա կատարվող աշխատանքները և բերքը տեղափոխել համապատասխան պահեստները:

յե) Բերքի այն մասը, որը հանձնվելու յե մթերող և այլ մարմիններին, պետք է դաշտից փոխադրել ուղղակի նրանց պահեստները, դրա համար նախորոք համաձայնության գալով

այդ մարմինների հետ և ստեղծելով անհրաժեշտ տեխնիկական պայմաններ։

8. ՍԵՐՄԱՑՎԻ ՅԵՎ ԿԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ.

ա) Սերմացվի և կերի ֆոնդերի պահպանման համար բերքահավաքի կամպանիայի ընկղբից նախապատրաստվում են համապատասխան շենքեր։

բ) Բոլոր կոլխոզներում անխտիր կերպով սերմացվի և կերի պահմանման համար. հատկացվող բոլոր շենքերը, պահեստները պետք է նախորոք ախտահանվեն ծծումբով կամ մի այլ ախտահանիչ նյութով։

գ) Ամեն անգամ սերմացուն կամ կերը շենքը լցնելուց առաջ պետք է կոլխոզի նախագահն անձամբ ստուգի շենքի պիտանիությունը այդ նպատակի համար և կազմի համապատասխան արձանագրություն։

դ) Առանց այդպիսի արձանագրության շենքի պիտանիության մասին կոլխոզի նախագահի ստորագրությամբ, չի թույլատրվում սերմացուն և կերը լցնել վորևե շենքի մեջ։

9. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՅԵՎ 1932 Թ. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

Անցյալներում բերքահավաքի կամպանիայի ընթացքում հաճախ մոռացության են

մատնվել աշնանացանի և հաջորդ տարվա գարնանացանի նախապատրաստական աշխատանքները։ Ցանքսերի բերքատվությունը բարձրացնելու և հաջորդ տարվա ցանքսերի տարածությունների պլանն ապահովելու համար պետք է բերքահավաքի աշխատանքների հետ միաժամանակ կատարվեն հետևյալ աշխատանքները.—

ա) Գարնան և ամռան հերկի (ցելի) այն մասը, վորի ժամանակը զուգադիպում է բերքահավաքի աշխատանքներին։

բ) Գարնան և ամռան ցելի, ինչպես և նախորդ տարվանից արված ցելերի մշակությունը, փոցխելը և այլն։

գ) Բերքահավաքից անմիջապես հետո նրպատակ է դրվում ցանքսից ազատ բոլոր հողերը վարել (խոզանավար)։ Այդ աշխատանքը կատարվում է ըստ հնարավորության, մաքսիմալ չափերով ոգտագործելով աշխատող ձեռքերը և քաշող ուժը։

դ) Աշնանացանի նախապատրաստական աշխատանքների ընթացքում անպայման պետք է նչվի 1932 թ. գարնանացանի տարածությունների պլանը, վորով հնարավոր կլինի տեխնիկական կուլտուրաների,— ֆերբուլսերի, և այլ կուլտուրաների տարածությունները ապահովել ու նախապատրաստել համապատասխան կերպով։

Բամբակի, ծխախոտի, շաքարի ճակնդեղի և այլ տեխնիկական կուլտուրաների, ինչպես

և արմատապալարապատուղների ու բոստաննե-
րի համար հատկացվող հողերը առանձնա-
ցվում են և անխտիր կերպով հերկվում են բեր-
քահավաքից հետո ամառվա և աշնան ընթաց-
քում։ Վոչ մի դեպքում չի թույլատրվում այդ
հողերի վրա աշնանացան կատարել կամ վորևե
ուրիշ բույս ցանել։

10. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՑԱՆՔՍԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՅԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ.

Ա. Արտադրանքի նորմաները, աշխատանքի գնահատումն աշխորով և բրիգադների կազմակերպումը.

ա) Բերքահավաքի աշխատանքները, ինչ-
պես և բոլոր աշխատանքները կոլխոզներում,
պետք է կատարվեն անպայման գործավար-
ձով, աշխատանքի գնահատումը պետք է կա-
տարվի աշխորերով՝ Կոլտնտեսենտրոնի հրա-
հանգի համաձայն։

բ) Բոլոր կոլխոզներում խնամքի և բեր-
քահավաքի կամպանիայի ժամանակ կատար-
վելիք բոլոր աշխատանքների համար մշակ-
վում են արտադրանքի նորմաներ և կատար-
վում է այդ աշխատանքի գնահատումն աշխո-
րերով։

գ) Այն կոլտնտեսություններում, վորտեղ
արտադրանքի նորմաների մշակումը և աշխա-
տանքների գնահատումը կատարված է, պետք

է վերանայել նորմաներն ու մտցնել փոփոխու-
թյուններ Կոլտնտեսենտրոնի հրահանգի և գյու-
ղատնտեսության ընթացքում կոլխոզում ձեռք բեր-
ված փորձի հիման վրա։

դ) Անցյալում արտադրանքի նորմաներ մը-
շակելիս մի շարք կոլխոզներում, և նույնիսկ
շրջաններում, վերցրել են ցածր նորմաներ։
Մի յերևույթ, վորի հետևանքով բանվորա-
կան ուժը, մեքենաներն ու գործիքները լրիվ
բեռնվածությամբ չեն ոգտագործվում։ Ցածր
նորմաները հարվածում են աշխատանքի ար-
տադրողականությանը։ Մյուս կողմից նրանք
իջեցնում են աշխորվա արժեքը։

Ուրիշ շրջաններում նկատվել են սխալներ
հակառակ ուղղությամբ։ Արտադրանքի նոր-
մաները վերցրել են շատ բարձր, կոլխոզնիկ-
ների ուժից վեր։ Դրա հետևանքով կոլխոզ-
նիկների մեջ տրամադրություն է առաջ գա-
լիս որավարձի սիստեմին վերադառնալու։

Արտադրանքի նորմաներ մշակելիս պետք
է հիմք ընդունել նույն կոլխոզի հարվածային
անդամների արտադրանքը այն հողային, ջր-
ային պայմաններում, վոր կա կոլխոզում, և
այն գործիքներով, մեքենաներով ու լծկաններ-
ով, վորոնցով կատարվում է աշխատանքը
տվյալ կոլխոզում։

դ) Արտադրական խորհրդակցության և
վարչության կողմից մշակված նորմաներն
ու աշխատանքի գնահատումն աշխորերով

անպայման պետք է քննվի կոլխոզնիկների ընդհանուր ժողովում. վերջինիս կողմից հաստատվելուց հետո նրանք մտնում են ուժի մեջ:

յե) Բերքահավաքի կամպանիայի ծրագրի հիման վրա, յելնելով կոլխոզում ընդունված արտադրանքի նորմաներից, կազմվում են բրիգադներ: Յուրաքանչյուր բրիգադ կցվում է վորոշ հողամասի, և պատասխանատու յե դարձվում այդ հողամասի վրա կատարվող բոլոր աշխատանքների համար մինչև բերքահավաքի աշխատանքների վերջը:

զ) Գործավարձի կիրառումը զանազան աղավաղումների չենթարկելու համար, ինչպես նկատվել է զարնանացանի ընթացքում, բրիգադները պետք է բաժանել ողակների; աշխատանքները գործավարձով տալ ողակներին, և յուրաքանչյուր ողակի, իսկ հնարավորության դեպքում յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատանքը հաշվի առնել առանձին: Ողակը կարող է բաղկացած լինել՝ մեկ կամ յերկու դութանից, 4–5 հնձվորից ու կապողներից, մեկ կայի վրա աշխատողներից և այլն:

ե) Յուրաքանչյուր բրիգադի աշխատանքներն ամբողջապես, կամ նրա վորևե մասը վերջացնելուց հետո, այդ աշխատանքն ստուգվում է և ընդունվում, վարչության հանձնարարությամբ նրա անդամներից մեկի, դաշտավարի կամ դրա համար լիազորված ուրիշ

կոլխոզնիկի միջոցով, վորն ստուգում է կատարված աշխատանքի քանակը և վորակը, նշանակում է իր դիտողությունները և ներկայացնում է վարչությանը:

Աշխատանքի վորակը վատ լինելու դեպքում տվյալ աշխատանքին հասնող աշխորերի թիվը պակասեցվում է:

ը) Յուրաքանչյուր բրիգադ իրեն հանձնարարված աշխատանքները պետք է կատարի նշանակված ժամկետին: Այն դեպքում յերբ մի բրիգադ նշանակված ժամկետին չի ավարտում աշխատանքը, վարչությունը ոգնության է ուղարկում հարվածային բրիգադներ և վերջիններին միջոցով կատարվող աշխատանքի գնահատումը բարձրացնելով 10–25 տոկոսով, ի հաշիվ այն կոլխոզնիկների աշխորերի, վորոնք ձգձգում են աշխատանքը:

թ) Բանվորական պլանը կազմելու ժամանակ, յելնելով պահանջվող աշխատանքների ընդհանուր քանակից, յուրաքանչյուր տնտեսության համար սահմանվում է աշխորերի վորոշ դումար, վորը վերջինս պետք է կատարի:

Արտադնացության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով պետք է խրախուսել այն դեպքերը, յերբ կոլխոզնիկն իրեն հանձնարարված աշխատանքը կատարում է ընտանիքի աշխատունակ անդամների միջոցով, յեթե այդ հանդամանքը չի անդրադառ-

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴ. Публ. Библиотека АН Арм. ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
14815-57

նա աշխատանքի վորակի վրա բացասական կերպով։

Ժ) Անաշխատունակ անդամներով շատ ծանրաբեռնված ընտանիքի անդամներին նրպաստելու նպատակով, կոլտնտեսության վարչությունն աշխատանքների բաշխում կատարելու ժամանակ այդպիսի ընտանիքների աշխատող անդամներին կդում է համեմատաբար յերկարատև ու բարձր գնահատվող աշխատանքների, բայց անպայման հաշվի առնելով նրանց ունակությունները։

Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.

Աշխատանքի դրծամարձային սիստեմի կիրառման ամենակարևոր նախապայմաններից մեկն աշխատանքի նախնական հաշվառման ճիշտ կազմակերպումն է։ Առանց ճիշտ հաշվառման, չի կարող լինել դրծարքային սիստեմ։

Աշխատանքի նախնական հաշվառումը ճիշտ կերպով կատարելու համար պետք է ղեկավարվել հետևյալ հիմունքներով.

ա) Բրիգադիրն ամեն որ հաշվի յե առնում բրիգադում աշխատող յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի քանակն առանձին-առանձին, հարկ յեղած դեպքում չափելով հողամասը կամ կշռելով բերքը և այլն։

բ) Բրիգադիրն ամեն որ յերեկոյան բրիգադի անվանացուցակում նշանակում է յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատանքի քանակը։

գ) Ամենաուշը հինգ որը մեկ անդամ յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատանքը գնահատվում է աշխատանքային որերով և գրանցվում է նրա աշխատանքային գրքույկում։

դ) Ամիսը մեկ անդամ կոլխոզնիկի աշխատանքի քանակն աշխատանքային գրքույկից փոխանցվում է կոլխոզնիկի անդամագրքույկի (հաշվեգրքույկի) մեջ։

11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ա) Աշխատանքի արտադրողականությունը և դիսցիպլինան բարձրացնելու, այդ ուղղությամբ կոլտնտեսական մասսաների ստեղծագործությանն ուղղություն տալու, նրանց մեջ սոցիալիստական ենտուզիազմ առաջացնելու նպատակով պետք է աշխատանքի սոցիալիստական ձևերը դարձնել կոլխոզնիկների ամենորյա աշխատանքի մեթոդ։

բ) Լայն կերպով պետք է ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը կոլխոզնիկների մեջ՝ նրանց աշխատանքի բոլոր բնագավառներում։ Սոցմրցման պայմանագիր պետք է կնքեն կոլխոզը՝ կոլխոզի հետ, բրիգադը՝ բրիգադի, բրիգադի ողակները իրար հետ,

և վերջապես առանձին կոլխոզնիկները մեկը մյուսի հետ:

գ) Ուժեղ կոլխոզները պետք է հասարակական բուքսիրի վերցնեն թույլ կոլտնտեսություններին, նպատակ ունենալով ոգնել նրանց, հայտնաբերել նրանց սխալներն ու թերությունները, ցույց տալ դրանց ուղղելու միջոցները: Նույն ձևով բուքսիր պետք է կազմակերպվի միևնույն կոլխոզում բրիգադ բրիգադի, մի ոգակը մյուսի և վերջապես առանձին կոլխոզնիկների նկատմամբ:

դ) Հին կոլխոզնիկները, վորոնք ունեն կոլեկտիվ աշխատանքի յերկար տարիների փորձ, վորոնք աչքի յեն ընկնում իրենց կազմակերպվածությամբ, շեֆություն են վերցնում իրենց հարևան նոր և թույլ կոլտնտեսությունների վրա, նրանց ցույց տալով սիստեմատիկ ուժանդակություն մեքենաներով ու գործիքներով, յոկաններով, աշխատող ձեռքերով, իրենց աշխատանքի լավ փորձերը փոխադրելով, և այլն:

ե) Կոլտնտեսության վարչությունը, կազմակերպելով աշխատանքի սոցիալիստական ձևերի կիրառումը, պարտավոր է ղեկավարել այդ աշխատանքներն ամբողջ ժամանակ: Նա կազմակերպում է կոլխոզի ներսում սոցմրցման պայմանագրերի հաշվառումն ու ստուգումը, ուշի ուշով հաշվի յե առնում բոլոր հարվածայիններին:

զ) Իրենց ակտիվությամբ աչքի ընկնող կոլխոզնիկներին, հարվածայիններին խրախուսելու համար վարչությունը նրանց անունները հրապարակում է կոլխոզի և հասարակական ժողովներում, պատի թերթերում և կենտրոնական մամուլի էջերում, նրանց տալիս է զանազան արտոնություններ և այլն:

Բացի դրանից, յուրաքանչյուր կոլխոզում ստեղծվում է նրանց համար հատուկ պարգևատրման ֆոնդ՝ կոլտնտեսության տարեկան յեկամտի $^1/_2$–1 $^0/_0$-ի չափով: Հարվածայինների հաշվառումը կատարվում է գյուղատնտեսական աշխատանքների յուրաքանչյուր սեզոնում՝ առանձին և նրանց պարգևատրումը, կամ ուրիշ ձևով խրախուսանքի արժանացնելը, կատարվում է սեզոնի վերջում՝ անմիջապես:

12. ԱՐՏԱԴՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որեցոր աճող և զարգացող սոցիալիստական արդյունաբերությունը, քաղաքի շինարարությունը և խորհրդային տնտեսությունների շինարարությունը բանվորական ձեռքերի պակասություն են զգում: Այդ պակասը պլանային կարգով լրացնելու համար ամենից առաջ պետք է ոգտագործվեն կոլխոզներում յեղած ազատ բանվորական ձեռքերը:

Այդ նպատակով անհրաժեշտ է, վորպեսզի՝

ա) Մեծ խնամքով և ուշադրությամբ կազմվեն կոլխոզներում կատարվող բոլոր աշխատանքների որացուցային ծրագրները, դրանց միջոցով ճիշտ կերպով հայտնաբերվեն

կոլխոզներում գտնվող ավելցուկ աշխատող ձեռքերը։ Աշխատող ձեռքերի բալանսը կազմել ըստ ամիսների։

բ) Յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է Շրջկոլխոզմիությանը միշտ տեղյակ պահի իր ունեցած ազատ աշխատող ձեռքերի մասին, վորպեսզի նրանք կազմակերպված ձևով ուղարկվեն դրսի աշխատանքների՝ համապատասխան մարմինների միջոցով։

գ) Կոլտնտեսությունները ամեն կերպ պետք է նպաստեն արտադնաց կոլտնտեսականներին, ստեղծելով նրանց համար վորոշ արտոնություններ։ Նրանց պետք է կոլխոզի բերքից տրվի անհրաժեշտ կենսամթերքների մինիմումը։

Ծանոթություն.—Այդ արտոնություններից ոգտվում են սեվագործ կամ վորակյալ բանվորներն ու վարպետները (արդյունաբերության, շինարարության և խորհրդատեսությունների), վորոնք գնացել են աշխատանքի՝ կոլխոզի վարչության միջոցով։

13. ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Աշխատանքի կոլլեկտիվ ձևերն ուժեղացնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, աշխատող ձեռքերն ավելի լրիվ ոգտագործելու, արտադնացությանը նրպատեալու, կանանց յեվ գյուղի սոցիալիստական շինարարությանը լրիվ չափով մասնակից դարձնելու համար պետք է ստեղծվեն հնարավորություններ կանանց աշխատանքն առավելագույն չափով ոգտագործելու համար։ Այդ նպատակով՝

ա) Կոլտնտեսություններում պետք է կազմակերպվեն մանկան մսուրներ և հրապարակներ։

բ) Դաշտային աշխատանքների ժամանակ, աշխատանքի վայրերում պետք է կազմակերպել շրջիկ խոհանոցներ։

գ) Այն աշխատանքների համար, վորոնք կատարվում են մեծ մասամբ կանանց միջոցով, պետք է կազմակերպել կանանց հատուկ բրիգադներ՝ կին բրիգադիրներով։ Կանանց բրիգադների կազմակերպումն հատկապես կարեվոր է այն կոլխոզներում, վորտեղ նախապաշարմունքների և այլ պատճառներով կանայք տղամարդկանց հետ միասին չեն աշխատում։

14. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ՅԵՎ ԲԱՇՈՂ ՈՒԺԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.

Յուրաքանչյուր կոլխոզ բերքահավաքի կամպանիայի ծրագրում պետք է նախատեսի գյուղատնտեսական գույքի, քաշող ուժը, փոխադրական միջոցները, պարկերը, տակառներ և այլ սամանեղենը (տարա) և ընդհանրապես

այն բոլոր տեխնիկական միջոցները, վորոնք պետք են այդ կամպանիայի ընթացքում։ Պետք է պարզել նրանց ընդհանուր պահանջը, կոլխոզում յեղած քանակը. պակասորդը լրացնելու մասին պետք է ձեռք առնել համապատասխան միջոցներ։

Այդ նպատակով պետք է ոգտագործել այն հարեվան կոլխոզների գույքը, վորոնց մոտ համապատասխան աշխատանքները վերջանում են տվյալ կոլխոզի միևնույն աշխատանքներից ավելի շուտ կամ ավելի ուշ։

Պետք է վերանորոգել բոլոր անհրաժեշտ մեքենաները ու գույքը. արակտորները ու մեքենաները ապահովել վառելանյութով և պահեստի մասերով։

Նորոգման համար ոգտագործել կոլխոզի ունեցած հնարավորությունները, այդ գործի համար առանձնացնելով կոլխոզնիկ արհեստավորներին. անհրաժեշտ դեպքերում նորոգումը կատարել Մ. Տ. Կ-ի, կոոպերացիայի, սովխոզների և այլ արհեստանոցներում։

Պետք է իր ժամանակին պատրաստել նորոգման համար անհրաժեշտ բոլոր նյութերը. դրա համար ոգտագործել նաև հին պիտանի յերկաթյա մասերը։

Անհրաժեշտ է կազմակերպել մանր վերանորոգումները դաշտում՝ դաշտային աշխատանքների ժամանակ։

Պետք է հաշվի առնել և պատրաստել անհրաժեշտ քանակությամբ ամանեղեն, տակառներ վառելանյութի համար, պարկեր՝ բերքը լցնելու համար և այլն։

Բոլոր աշխատանքների ժամանակ պետք է ամբողջ կենդանի և մեռյալ գույքը աշխատի լրիվ բեռնվածությամբ, անհրաժեշտ դեպքերում աշխատելով գիշեր-ցերեկ սահմանելով 2 հերթի աշխատանք։ Տրակտորներն ու կալող մեքենաները պիտի աշխատեն օրական 21 ժամից վոչ պակաս։

15. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ.

Հրդեհների դեմ պայքարելու և նրանց կանխելու համար ձեռք են առնվում հետևյալ միջոցները.—

ա) Առանձնացվում են հատուկ կոլխոզնիկներ այդ գործը ղեկավարելու համար։

բ) Մեծ կոլխոզներում կազմակերպվում է հրդեհաշեջ գումակներ. իսկ փոքրերում գումակի ամենապարզ անհրաժեշտ գործիքները։

գ) Դաշտերում արգելվում է հավաքված բերքը կուտակել մեծ չափերով մի տեղում. պետք է կուտակել փոքր չափով և իրարից հեռու։

դ) Արգելվում է վառանյութ տեղերում ծխելը։

յե) Համապատասխան տեղերում պահվում է ջրի պաշար։

զ) Հսկողության և պահմանման համար ամեն որ նշանակվում են հերթապահներ։

16. ԲԵՐԲԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԵԼԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բոլոր վերոհիշյալ աշխատանքները ծրագրված կերպով ժամանակին կատարելու, բոլոր հարուցված խնդիրները հետևողական կերպով լուծելու համար, յուրաքանչյուր կոլխոզ պետք է կազմի ցանքսերի և այդպիսիների խնամքի ու բերքահավաքի բանվորական ծրագիր:

Այդ ծրագրում նախատեսվում են հետևյալ աշխատանքները.—

1. Յուրաքանչյուր կուլտուրայի ամեն մի աշխատանքի համար սահմանվում է խիստ ժամկետ՝ սկիզբը և վերջը:

2. Կազմվում է աշխատող ձեռքերի հաշվեջը տվյալ ժամանակաշրջանում տնտեսության բոլոր տեսակի աշխատանքների համար, յելնելով կոլխոզի մշակած արտադրանքի նորմաներից:

3. Հաշվի յե առնվում կոլխոզի աշխատունակ ազգաբնակչությունը և կազմվում է աշխատող ձեռքերի բալանսն ըստ ամիսների: Պակասորդը լրացնելու համար կոլխոզի վարչությունը ձեռք է առնում անհրաժեշտ միջոցներ. ավելցուկ աշխատող ձեռքերն ուղարկում է արտադնացության՝ արդյունաբերության մեջ, քաղաքի շինարարության վրա կամ խորհտնտեսություններում աշխատելու:

4. Նույն ձևով հաշվի յե առնվում մեքենաների և գործիքների պահանջը, կոլխոզի ունեցածը, պակասորդը կամ ավելցուկը:

6. Բոլոր աշխատող ձեռքերը բաժանվում են բրիգադների խառը կամ մասնագիտական:

7. Յուրաքանչյուր բրիգադի հանձնարարվում է վորոշ աշխատանք. ցույց է տրվում աշխատանքի տեսակը, տեղը և կատարման ժամկետը:

8. Յուրաքանչյուր բրիգադի կցվում է համապատասխան քանակությամբ բանող անասուն, մեքենաներ, գործիքներ և փոխադրական միջոցներ. նշանակվում է բրիգադիր, վորը պատասխանատու յե բրիգադին հանձնարված բոլոր աշխատանքների կատարման և նրան հանձնված գույքի խնամքի համար:

9. Աշխատանքի ժամկետները սահմանվում են այն հաշվով, վորպեսզի առանձին աշխատանքները կատարվեն մեկը մյուսի հետևից անընդհատ, կամ միաժամանակ՝ յեթե վիշ անընդհատ, կամ միաժամանակ՝ յեթե թույլ է տալիս աշխատող և քաշող ուժի և գյուղատնտեսական գույքի քանակը:

10. Բրիգադի կազմը և մեծությունը վորոշվում է աշխատանքի տեսակի և ծավալի համաձայն, բայց այնպես, վոր բոլոր աշխատողները լինեն լրիվ բնակավորված և վորպեսզի մեկ բրիգադի աշխատանքը չխանգարի մյուս բրիգադների աշխատանքներին:

11. Իր աշխատանքները վերջացնելուց հետո, կոլտնտեսությունը կազմակերպում է բերքը,

քահավաքի աշխատանքները՝ թույլ կոլխոզնե-
րի և չքավոր-միջակ անհատ տնտեսություն-
ների համար, ինչպես կոլխոզի անդամների մի-
ջոցով, նույնպես և անհատ տնտեսություններից
խմբակներ և բրիգադներ կազմակերպելու մի-
ջոցով:

12. Բերքահավաքի կամպանիայի ծրագի-
րը կազմում է կոլխոզի վարչությունը կոլտն-
տեսության բրիգադների և ակտիվի հետ միա-
սին ու բերքահավաքի աշխատանքները սկսվե-
լուց յուրաքանչյուր շաբաթ առաջ քննվում և հաս-
տատվում է կոլխոզնիկների ընդհանուր ժողո-
վում:

ՀԱՍՀ Գրադարան
Публ. Библиотека
ՀՍԽՀ — СССР
им. А. Микояна
Ս. ՄԵՍՈՊԻՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0295250

16799

ԳԻՆԸ 5 ԿՊԿ. (1 մ.)

КАК ОРГАНИЗОВАТЬ СБОР УРОЖАЯ

Госиздат ССР Армении
Эривань—1930